

ԽԵԹԱԿԱՆ ՎԵՐԻՆ ԵՐԿԻՐԸ

Խեթական վերին կամ թարձր երկիրը¹ գտնուել է Խեթական պետութեան հիւսիսարեւելեան հատուածում: Այն հանդիսացել է Խաթթիի կարեւորագոյն երկրամասերից մէկը եւ հիմնականում ընդգրկել է այն հողերը, որոնք յետագայում յայտնի են դարձել որպէս Փոքր Հայք²: Աշխարհագրական առումով նրա տարածքի զգալի հատուածը (հիմնականում արեւելեան) մասն է կազմել Հայկական լեռնաշխարհի եւ այդ տեսանկիւնից նրա պատմութիւնը հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ Հայաստանի հին շրջանի պատմութեան ուսումնասիրման համար³: Հետաքրքիր

-
- 1 Երկրամասը խեթական աղբիւրներում յիշատակուել է կամ՝ որպէս Վերին երկիր, կամ՝ Վերին երկրներ (^{KUR}UGU⁷⁷, KUR ^(URU)Sarazzi, KUR ^{URU}UGU⁷⁷, ^{KUR}UGU^{7X^M}, KUR.KUR^{MES} UGU⁷⁷, ^{KUR}AN.TA, KUR ^{URU}I(E)-LI-TI (տե՛ս DEL MONTE, G. - TISCHLER, J., *Répertoire Géographique des Textes Cuneiformes, VI. Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte*, Wiesbaden 1978 (այսուհետ՝ RGTC, VI), 293-294): Տեղանունը կարող է քարդմանուել նաեւ լեռնաշխարհ, վերնաշխարհ (տե՛ս RÜSTER, Ch. - NEU, E., *Hethitisches Zeichenlexikon: Inventar und Interpretation der Keilschriftzeichen aus Boğazköy-Texten*, Wiesbaden 1989, 228):
 - 2 Փոքր Հայքը հիմնականում Վերին Եփրատի, Վերին Հալիսի եւ Վերին Գայլ գետերի աւազաններն եր ընդգրկում: Հանդիսանում էր առանձին թագաւորութիւն (Ա.Ք. Դ.-Բ.), որ յետագայում ընդգրկուում է Պոնտոսի պետութեան կազմում: Նրա արեւելեան մասերն այնուհետեւ անցնում են Մեծ Հայքի թագաւորութեան: Այդ միաւորուած տարածքները «Աշխարհացոյց»ում յայտնի են որպէս Բարձր Հայք աշխարհ: Փոքր Հայքից սկիզբ են առնում Հայկական լեռնաշխարհի եւ Փոքր Ասիայի կարեւորագոյն մի քանի գետեր՝ Հալիսը, Իրիսը, Գայլը եւ այլն (տե՛ս ԵՐԵՄԱՆ, Ս., Հայաստամը ըստ «Աշխարհացոյց»ի, Երեւան 1963, 88, 100: Հայ ժողովրդի պատմութիւն, հա. 1, Երեւան 1971, 21):
 - 3 Հայկական լեռնաշխարհի արեւմտեան սահմանների վերաբերեալ տես՝ ՅՈՂ-ՐԱԲՅԱՆ, Լ. Ի., *Орография Армянского нагорья*, Ереван 1979, 14-15, 23-30. ԳԱԲՐԻԵԼԵՍԱՆ, Հ., Հայկական լեռնաշխարհ, Երեւան 2000, 14-15:

է նաեւ այն փաստը, որ Վերին (Բարձր) երկրի անունը սերտօրէն առնչւում է նաեւ Հայոց աղբիւրներում յիշատակուած Բարձր Հայք անուան հետ⁴: Բարձր Հայք աշխարհի տարածքն աշխարհագրական առումով մօտ է եղել Վերին երկրի տարածքին կամ, հաւանական է նաեւ, նրա մի մասն է կազմել: Այս հանգամանքները խեթական Վերին երկրի պատմութեան ուսումնասիրութիւնը խիստ հետաքրքրական են դարձնում:

ՎԵՐԻՆ ԵՐԿԻՐ ՏԵՂԱՆՈՒՆԸ

Խէթերն իրենց աշխարհը, կարծես, դիտարկում էին որպէս Միջնաշխարհ (Heartland) (մայրաքաղաք Խաթթուսան եւ Մջակագը) եւ Վերին ու Ստորին երկրներ⁵: Աշխարհի, պետութեան մասին նման պատկերացումներ կային նաեւ այլ երկրներում: Դրանք աւելի շատ կապուած էին աշխարհագրական դիրքի, քան

4 Բարձր Հայք (Կողմն Կարմոյ, Կատար Երկրի) երկրանունը մինչեւ «Աշխարհացոյց» չի յիշատակուել: Յակոր Կարմեցին աշխարհն անուանել է նաեւ Վերին Հայք (ՅԱԿՈՎՔ ԿԱՐՆԵՑԻ, Տեղագիր Վերին Հայոց: Յիշատակարան ԺԵ. Պարու, Վաղարշապատ 1903, 9): «Աշխարհացոյց»ում նշում է, որ երկրամասը Բարձր Հայք է կոչուել՝ պարզապես Ակատի ունենալով նրա բարձր դիրքը (ԵՐԵՄԵՆԱՆ, Ա., Հայաստամը ըստ «Աշխարհացոյց»ի, 44, 106: ՅԱՐՈՒԹԻՒՆԵՆԱՆ, Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը ըստ «Աշխարհացոյց»ի, մաս Ա, Երեւան 2001, 56-113): Սակայն նման մօւեցման դէպէում նմանապես Բարձր երկիր կարելի է կոչել նաեւ Մեծ Հայքի այլ նահանգներ եւս, որոնք նոյնպես բարձրադիր են և որտեղ նոյնպես բարձրաբերա շատ լեռներ կան: Այսինքն՝ միայն դիրքով չի կարելի բացատրել տեղանուան առաջացումը:

5 Ստորին երկիրը գտնուում էր Մարասսանտիյա (Հալիս) գետից հարաւ (Իկոնիայի սարահարքում): Նրա արեւմուտքում Արցավա երկրներն էին, իսկ հարաւ-արեւելքում Կիցցուվատնան: Ստորին երկիրը նոյնպես, ինչպես Վերին երկիրը, հանդիսանում էր Խաթթի կարեւոր հոգեւոր կենտրոններից մէկը (տե՛ս HUTTER, M., *The Lower land, in The Luwians*, Leiden-Boston 2003, 238-250):

6 Հին Եգիպտոսը համարւում էր երկու երկրների՝ Վերին և Ստորին երկրների (Եգիպտոսների) «միութիւն», եւ փարաւոնները սովորաբար կրում էին Վերին և Ստորին երկրների արքայ տիտղոսը (տե՛ս *The Oxford Encyclopedia of Ancient Egypt*, Oxford 2001, vol. 2, 305-309; vol. 3, 409-411, 464-470): Այստեղ նոյնպես, ինչպես Խաթթի ու, Վերին երկրի կողմից էր հոսում երկրի կարեւոր գետը՝ Նեղոսը:

տեղանքի բարձրադիր կամ ցածրադիր լինելու հետ⁷: Ընդհանրապէս, վերին երկիրը նաեւ մի տարածք էր, որտեղից սկիզբ էին առնում կամ հոսում երկրի կարեւոր գետերը⁸: Այսպէս, խեթական վերին երկիրը կարելի է դիտարկել որպէս վայր, որտեղից սկիզբ էր առնում եւ հոսում Խաթթիի ամենակարեւոր Մարասսանտիյա (Հալիս) գետը:

Հաւանական է կարծել, որ խէթերը վերին երկիր տեղանունը վերցրել են խաթթերից՝ Յամենայն դէպս, արդէն Հին թագավորութեան ժամանակ (ԺԷ.-ԺԶ. Ն.Ք.) վերին երկրի տարածքը գետնում էր Խեթական պետութեան կազմի մէջ:

ՎԵՐԻՆ ԵՐԿԻՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Վերին երկրի տեղադրութեան հարցերին անդրադարձել են շատ խէթագէտներ, սակայն Հիմնականում Խաթթիի պատմու-

- 7 Առաջիններից մէկը, որ անդրադարձել է հարցին, է. Ֆոռերն է: Նա նշել է, որ Վերին եւ Սոորին երկրներ տեղանունները գալիս են դեռևս Քանէսի աշշուրական առևտորական գաղութների ժամանակներից (FORRER, E., *Forschungen*, Bd. 1, T. 1. *Die Arzaova-Länder*, 1926, 40): Վերին եւ Սոորին երկրանունների եւ հարցի պատմութեան մասին տե՛ս նաև GURNEY, O.R., *The Upper Land, mātum elītum, Hittite Studies in Honor of Harry A. Hoffner Jr. on the Occasion of His 65th Birthday*, 2003, 119-126.
- 8 Դեռևս Սարգոս Աբբադցու (Ա.Ք. 2334-2279) մօտ կայ տեխս «միջագետնեան» Վերին երկրի մասին: Վերին երկրի մասին տեղեկութիւնները կան նաև Նարամ Մինի (Ա.Ք. 2254-2218) արձանագրութիւններում, այնուղ Սուրարտում եւ Վերին երկրները նշուել են որպէս նուանուած եւ հարկատու: Աբբադացիները, Վերին երկիր ասելով, հաւանարար, հասկանում էին իրենցից հիւսիս եւ հիւսիս-արևելուտք գտնուող երկրները, որտեղից սկիզբ էին առնում եւ հոսում Միջագետքի երկու կարեւոր գետերը՝ Եփրատը եւ Տիգրիսը (ՄՈՎՍԻՍԵԱՆ, Ա., Հայաստան Քրիստոնէց առաջ երրորդ հազարամետակում, Երեւան 2005, 31, 69, 70, 71, 72, 129-131: Նոյն, Աբբադի քագաւորութիւններ եւ Ուրի Գ. Հարստուրիւնը, Հայաստանի յարակից երկրների պատմութիւնն, հաւ. Ա., Երեւան 2013, 37-45):

- 9 Ըստ Մ. Ֆորլամինի⁹՝ Վերին եւ Սոորին երկրներ աշխարհագրական տերմինների օգտագործումը սկիզբ է առել Քամէսում՝ Մարասանտիյա գետի հոսանքով դէպսի վեր ու վար լողալու պատճառով: Այսինքն, գետի վերին աւազանը Վերին երկիրն էր: Sh'ն FORLANINI, M., *The Historical geography of Anatolia and the transition from the kārum-period to the Early Hittite Empire*, in *Anatolia and the Jazira during the Old Assyrian Period*, Leiden 2008, 57-86.

թեան համատեքստում: Մասնագէտների մեծ մասը նշում են նրա տեղադրութիւնը Խաթթիի հիւսիսարեւելեան հատուածում՝ Հալիսի վերին աւազանում¹⁰:

Գ. Գիորգաձէն նշել է, որ Վերին երկիրն ընդգրկել է ժամանակակից Թոկատից հարաւ-արեւելք ու Սեբաստիայից դէպի արեւելք ընկած տարածքը՝ մինչեւ Երզնկա: Հարաւում այն հասել է մինչեւ Տեւրիկ (Դիւրիկ): Նա Վերին երկիր աշխարհագրական հասկացութեան մէջ է տեղորոշել նաեւ Խալիւա, Էլուրիյա լեռները, Խալիլա, Խալիտու, Խասպինա, Վասիսյա, Գակիուսսա, Տարուկկու, Պարդուվատա, Խիննարիւանդա, Իւատալիսսա, Սապիդուվա, Տակկումիտա, Կատիսարիյա, Գազզապա, Դարիտտարա, Տիրիյա, Տիմ(մինա)¹¹ երկրները: Ըստ նրա, Վերին երկիր տեղանունը խէթերը նշել են տարածքային «նեղ» եւ «լայն» իմաստով¹²:

Սակայն Գ. Գիորգաձէի մօտ նշուած երկրների գդալի մասը հանդիսացել են կասկական տարածքներ, որոնք մօտ են գտնուել Վերին երկրին, սակայն անմիջականօրէն չեն մտել այդ խեթական երկրամասի մէջ: Ցամենայն դէպս, խեթական աղբեւր-

10 Օրինակ՝ FRIEDRICH, J., *Der Vertrag des Šuppiluliumaš mit Hukkanaš und den Leuten von Hajaša, Staatsverträge des Hatti Reiches in hethitischer Sprache*, Mitteilungen der Vorderasiatisch-ägyptischen Gesellschaft, 34, 1930, 161; VON SCHULER, E., *Die Kaškäer*, Berlin 1965, 13; YAKAR, J., *Beyond the Eastern Borders of the Hittite Empire: An Archaeological Assessment*, in *Hittite and other Anatolian and Near Eastern Studies in Honour of Sedat Alp*, Ankara 1992, 507-508; BRYCE, T., *The Kingdom of the Hittites*, New edition, Oxford 2005, 47, 149; MÜLLER-KARPE, A., *Recent Research on Hittite Archaeology in the "Upper Land", Central-North Anatolia in the Hittite period*, Acts of the international conference held at the University of Florence (7-9 February 2007), Roma 2009, 109-119 եւ այլն:

11 Տիմմինայի վերաբերեալ տե՛ս ՔՈՍԵՒՆ, Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանութենքը (ըստ խեթական սեպագիր աղբիւրների), Երևան 2004 (այսուհետ՝ ՀԼՏ), 97: Հեղինակը բնակավայրը տեղորոշում է Ժամանակակից Ջիմինի մօտ (Երզնկայից արեւելք):

12 ԳИОРГАДЗЕ, Г.Г., *К вопросу о локализации некоторых пунктов восточной периферии Хеттского царства*, Сообщения Академии наук Грузинской ССР, 1959, XXIII, 3, 364-366. Նոյն, *К вопросу о локализации и языковой структуре каскских этнических и географических названий*, Переднеазиатский сборник, 1961, 1, 165-179.

ները հնարաւորութիւն չեն ընձեռում այդ երկրները համարել խեթական վերին երկրի մաս:

Զ. Գարստանգը եւ Օ. Գըրնին իրենց «Խեթական տէրութեան աշխարհագրութիւնը» աշխատութեան մէջ վերին երկիրը տեղադրում են վերին Հալիսի աւազանում՝ վարչական կենտրոն նշելով Սամուխան¹³: Նրանք վերին երկրի մէջ են տեղորշում նաեւ իստիտինան, Զազիսան, Կաննուվարան¹⁴:

Վերին երկրի տեղադրութեան յատակեցումը կարեւոր է նաեւ Հայասայի (Ազգի) տեղադրութեան հարցի առնչութեամբ, քանզի նրանք հարեւան են եղել: Այս առումով այն յայտնուել է նաեւ հայագէտների ուշադրութեան կենտրոնում:

Ն. Մարտիրոսեանը վերին երկիրը տեղորշում է Փոքր Հայքի եւ Վերին Եփրատի աւազանի Մջանում¹⁵: Է. Քասունին նշում է, որ Վերին աշխարհը գտնուել է յետագայի Փոքր Հայքի տարածքի մեծ մասում, մասամբ նաեւ Կապաղովկիայի տարածքում, հիմնականում ներկայիս Սեբաստիայի նահանգում¹⁶: Հստ Գր. Ղափանցեանի՝ Վերին երկիրը գտնուել է Հայասայի հարեւանութեամբ՝ Դեսսիմի լեռներից արեւմուտք, փաստացի Վերին Հալիսի աւազանում: Հայասայի հետ այն սահմանակցում էր Զիմարա-կարահիսար գծով: Նա Տուրմիտոտա, Պալա եւ Տումաննա

13 Քաղաքը յիշատակուել է դեռևս «կապաղովկեան» տեխստերում եւ առեւտրական կապեր է ունեցել Քանէսի հետ: Մասնագէտների մեծ մասն այժմ Սամուխան տեղորշում է Քայալիքնար (Kayaşehir) հնավայրի տեղում (գտնում է Հալիս գետի հիւսային ափին՝ Սերաստիայից մօտ 55 կմ հարաւարեւմուտք) (տե՛ս MÜLLER-KARPE, A., *Recent Research on Hittite Archaeology in the "Upper Land", Central-North Anatolia in the Hittite Period*, 109-117): Քաղաքը հանդիսացել է նաեւ Խաքքի կարեւորագոյն հոգեւոր կենտրոններից մէկը (Սամուխայի դիցարանի մասին տե՛ս HAAS, V., *Geschichte der Hethitischen Religion*, Leiden - New York - Köln 1994, 578-580; ՀԼՏ, 85-90): Սամուխան յիշատակուել է նաեւ Սապուխա (Keilschrifttexte aus Boğazköy (այսուհետ՝ KBo) XLV 179) կամ Սամմախա ձեւով (KBo III 4 III 48, տե՛ս նաեւ RGTC, VI, S. 337-341; ՀԼՏ, 85-90):

14 GARSTANG, J. – GURNEY, O., *The Geography of the Hittite Empire*, London 1959, 32-36.

15 ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Ն., Խարբերդի շրջամմերը՝ Հայոց հնագոյն օրրամք, Խարբերդ եւ անոր ոսկեղեն դաշտը, Նորք 1959, 118:

16 ՔԱՍՈՒՆԻ, Ն., Նախահայկական Հայաստան: Հայաստանի քննական պատմութիւնը նորքարային շրջամէն 600 Ն. Ք., Պէյրուք 1950, 80-81:

երկրները նոյնպէս տեղորոշել է Վերին երկրում¹⁷: Սակայն հարկ է նշել, որ դրանք գտնուել են Խաթթուսայից հիւսիս եւ հիւսիսարեւմուտք ընկած տարածքներում¹⁸:

Առաւել մանրամասն Վերին երկրի տեղադրութեան հարցերին է անդրադարձել Վ. Խաչատրեանը: Նա նշում է, որ այս երկրի անունը տրւում էր խէթերի մօտ տարածքային լայն եւ նեղ իմաստով: Նեղ իմաստով խէթերը նկատի են ունեցել Երզնկայի հովտի հիւսիսային մասը, իսկ լայն իմաստով «Վերին երկրները» գրաւել են աւելի լայն տարածք: Դրանք այն տարածքներն էին, որ ընկած էին Ազգիի եւ Սամուխայի միջեւ, այսինքն՝ Հալիսի ակունքներից մինչեւ Երզնկայի հովիտ: Այնուհետեւ նա կարծիք է յայտնում, որ հստախարան, Խանխանան, Տիբիյեան, Խստիտինան, Վերին երկիրը (նեղ իմաստով) եւ Խաթթնան կազմել են Վերին երկիրը լայն իմաստով: Դրանցից Խաթթնան՝ կումմախա քաղաքով, գտնուել է Եփրատի հովտում ոլորանից մինչեւ Երզնկայի շրջանը: Իսկ վերջինս Խախանին է (Հայկ Խախ) Դանկուվա (միջնադարի Մթնի) եւ Բիտեյարիգա (Պիտտիյարիգա, Հայկ. Բթայառիճ) քաղաքներով: Խստիտինան ընկած է եղել Երզնկայի շրջանից անմիջապէս դէպի արեւելք՝ մինչեւ Եփրատի ակունքները: Խստիտինա գաւառի բնակավայրերից է Զագիսան, որ էրզրումի շրջանի Զագան է: Իսկ նրա Արծիյա քաղաքը միջնադարի Հայկական Արծնն է էրզրումից քիչ հեռու: Կանոնուվարա բնակավայրը գտնուել է Խստիտինայի տարածքում եւ տեղորոշուել է էրզրումի շրջանում գտնուող միջնադարի Կան բնակավայրի տեղում¹⁹: Այսպէս, Վերին երկիրը, համաձայն հեղինակի, ընդգրկել է Երզնկայի եւ էրզրումի շրջանները եւ հիմնականում համապատասխանել է միջնադարի Հայկական Բարձր Հայքի տարածքին:

Սակայն դատելով խեթական աղբիւրներից՝ Վերին երկիրն ընդգրկել է աւելի մեծ տարածք եւ գտնուել է կումմախայից (Կամախից) արեւմուտք: Վերջինս, խեթական աղբիւրներում

17 ԿԱՊԱՆՑՅԱ, ԳՐ., Խայաս-կոլյաբել արման, Երևան 1956, 37, 62, 63, 127:

18 Այդ երկրների տեղադրութեան վերաբերեալ առանձ մանրամասն տե՛ս RGTC, VI, 297-298, 437-438, 442-444, նաև MATTHEWS, R. - GLATZ, C., *The historical geography of north-central Anatolia in the Hittite period: texts and archaeology in concert*, Anatolian Studies, 59, 2009, 64-66.

19 ԽԱՉԱՏՐՅԱ, Բ., Վոստոчные провинции Хеттской империи, Ереван 1971, 58-60; Նոյն, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան 1998, 35-36:

տրուել է որպէս առանձին տարածքային միաւոր, որն աւելի ուշ Հայաստացից հաւանաբար անցել է խեթական տիրապետութեան ներքոյ, եւ չկայ տեղեկութիւն, որ այն մտել է Վերին երկրի կազմի մէջ²⁰: իսկ «Վերին երկրներ» պարզապէս կարող էր նշանակել, որ երկրամասն իր կազմի մէջ ընդգրկել է մի շարք «երկրներ»: Քիչ հաւանական է նաեւ, որ խեթական Արծիյա քաղաքը գտնուել է միջնադարեան Հայաստանի Արծն քաղաքի տեղում, քանի որ Արծնը մօտ է գտնուել կարինին, իսկ խեթական Արծիյեան գետային ճանապարհով կապ է ունեցել Պիտտիյարիդայի եւ Սամուխայի հետ, որոնցից վերջինս գտնուել է Հալիս գետի ափին²¹:

Վերին երկրի տեղադրութեանն է անդրադարձել նաեւ Ա. Քոսեանը: Նա նոյնպէս տեղորոշել է այն Վերին Եփրատի եւ Վերին Հալիսի միջակայքում²²:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ մասնագէտները միակարծիք են՝ նշելով, որ Վերին երկիրը գտնուել է Խաթթիի հիւս-սիս-արեւելքում, սահմանակից է եղել կասկա եւ Հայասա երկրներին: Նրանց կարծիքները հիմնականում տարբերում են Վերին երկրի տարածքային ընդգրկման եւ նրա բնակավայրերի հարցերում:

Մեր կարծիքով, չնայած խեթական աղբիւրները հնարաւորութիւն չեն ընձեռում յստակ տալ Վերին երկրի սահմանները (յատկապէս այն պատճառով, որ խէթակասկական հիւսիսարեւելեան սահմանագիծն անընդհատ փոփոխուել է), սակայն միանշանակ է, որ այն հիմնականում գտնուել է Հալիս գետի վերին աւազանում եւ ընդգրկել է հիմնականում Զիլէից (Զելա) մինչեւ կամախ ընկած տարածքը, հիւսիսում հասել մինչեւ Գայլ գետի հովիտ եւ Արեւելապոնտական լեռների հատուած (որտեղ սահմանակցել է կասկերի հողերին), իսկ հարաւորմ թեգարամա:

20 Այս մասին առաւել մանրամասն տե՛ս ՔՈՍԵՆՆ, Ա., Ամի-Կամախը խեթական դարաշրջանում, Պատմա-բանական հանդես, 2002, թիւ 3, 225-241:

21 LAROCHE, E., Catalogue des textes hittites, Paris 1971 (պյունիեն՝ CTH) 214.17. Արծիյայի, Սամուխայի, Պիտտիյարիդայի տևադրութեան վերաբերեալ տե՛ս ԱԼՏ, 118-119:

22 Վերին երկրի տեղայնացման շուրջ արուած տեսակետերի համրագումարը տե՛ս Արա հեղինակած ԱԼՏ, 90-91:

ԽԵԹԱԿԱՆ ՎԵՐԻՆ ԵՐԿՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հայկական լեռնաշխարհի կուր-Արաքսեան վաղբրոնգէդարեան մշակոյթը ն.ք. Գ. Հազարամեակում ներթափանցել է մինչեւ վերին երկրի տարածք²³, այսինքն՝ մասն է կազմել Հայկական լեռնաշխարհում առաջացած հոգեւոր եւ նիւթական մշակութային ոլորտին: Միեւնոյն ժամանակ Փոքր Ասիայի տարրեր շրջաններ արդէն ն.ք. Գ. Հազարամեակի կէսերից թեւակոխել էին վաղ պէտականութեան դարաշրջանը, առաջացել էին քաղաք-պէտութիւններ, որոնք յիշատակուում են նաեւ միջագետքեան աղբիւրներում: Դրանցից աչքի էին ընկնում Քանէսը կամ Նեսան (ներկայիս Քյուլ-թեփէ հնավայրը (հայ.՝ Ջրգօրթ²⁴), Կեսարիայից 21 կմ. հիւսիս-արեւելք), Պուրուսխանդան, Յալպան, Կուսսարը, Անկուվան, Խաթթուսան եւ այլն: Շնորհիւ ն.ք. Ի. Դարի վերջերից դէպի Փոքր Ասիա ուղղուած աշշուրեան առեւտրական գաղութային համակարգի ընդլայնման՝ վերոնշեալ քաղաքները սերտ յարաբերութիւններ հաստատեցին միջագետքեան աշխարհի հետ²⁵: Ն.ք. Բ. Հազարամեակի առաջին կէսի ընթացքում Աշուրից դէպի Քանէս եւ Փոքր Ասիայի այլ շրջաններ միջազգային առեւտուր էր իրականացնուում: Աշշուրն իր առեւտրական գաղութները հիմնել էր առեւտրական մայրուղինների հանդուցակէտերում՝ հումքի աղբիւրներին առաւել մօտ, յատկապէս՝ Փոքր Ասիայի արեւելեան շրջաններում (հիմնականում յետագայի կապադովկիայի տարածքում)²⁶: Այս ժամանակաշրջանի

23 BOBOKHYAN, A., *Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus, ca. 2500-1500v. Chr.*, Band 1, BAR IS 1853, 2008, 24-25.

24 ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Ն., Խարբերդի շրջանները Հայոց հնագոյն օրրանը, Էջ 92:

25 Փոքրասիական բաղաք-պէտութիւնների այլ շրջանի պատմութեան վերաբերեալ տե՛ս՝ LEWY, H., *Anatolia in the Old Assyrian Period*, Cambridge Ancient History, vol. I, 1965, 1-29; ORLIN, L.L., *Assyrian Colonies in Cappadocia*, The Hague-Paris 1970; YAKAR, J., *Ethnoarchaeology of Anatolia*, Tel Aviv, 22-26; BRYCE, T., *The Kingdom of Hittites*, Oxford, 2005, 21-37; BARJAMOVIC, G., *A Historical Geography of Anatolia in the Old Assyrian Colony Period*, Copenhagen 2011 եւ այլն:

26 Համաձայն «կապադովկեան» տեխստերի՝ օտարերկրեայ առեւտրականների կողմից Փոքր Ասիայում ստեղծուել էին երկու տեսակի առեւտրական բնակավայրեր՝ կարում (աֆֆ.՝ *karum*, բառացի՝ «երուամդան», «հանգրուան»՝ գաղութ, որ տուեալ բաղակում ունէր որոշակի ինքնավարութիւն) եւ վարարում (աֆֆ.՝ *wabartum*՝ առեւտրական կէտ, կայան): Բոլոր օտարերկրեայ

«կապադովկեան» տեքստերում, ինչպէս նաև խեթական Հին թագաւորութեան շրջանի (ն.ք. ԺԷ.-ԺԶ. դարերի) աղբիւրներում Վերին երկիր տեղանունը չի յիշատակուել: Խեթական Վերին երկրի մասին մենք տեղեկութիւններ ենք քաղում միայն խեթական Միջին եւ Նոր թագաւորութեան ժամանակաշրջանի (ն.ք. ԺԵ.-ԺԳ. դարերի) աղբիւրներից: Չնայած այդ ամէնին՝ խեթական աղբիւրներում դեռեւ Հին թագաւորութեան ժամանակաշրջանից կան տեղեկութիւններ Վերին երկրում գտնուող բնակավարերի վերաբերեալ:

Խեթական աղբիւրներում առաջին անգամ Վերին երկիր տեղանունը յիշատակում է Տապիկկայի (Մաշատի) տեքստերում²⁷: Վերջիններս ներկայացնում են Տապիկկա խեթական քաղաքից²⁸ ուղարկուած նամակներ: Տեքստերը թուագրուել են խե-

առեւտրական համայնքների կենտրոնը հանդիսանում էր Քանեսի կարումը: Տե՛ս LEWY, H., *Notes on the Political Organization of Asia Minor at the Time of the Old Assyrian Texts*, Orientalia, 1964, vol. 33, f. 2-3, 181-198; ЯНКОВСКАЯ, Н.Б., *Торговая община Каниша и свободный рынок* (Малая Азия XIX в. до н.э.), Древняя Анатолия, Москва 1985, 228-242.

27 Տե՛ս ALP, S., *Hethitische Briefe aus Maşat-Höyük*, Ankara 1991; Տե՛ս նաև ՔՈՍԵԱՆ, Ա., Նոր նիւթեր Խեթական տէրութեան և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխարարերութիւնների մասին, Մերաւար և Միջին Արեւելիքի երկրներ և ժողովուրդներ (այսուհետ՝ ՄՄԱՆՁ), Երևան 2001, 233-245: Վերին երկրի վերաբերեալ յիշատակութիւններ կամ 18 (Մշտ. 75/61), 24 (Մշտ. 75/18), 42 (Մշտ. 75/26), 71 (Մշտ. 75/111), 96 (Մշտ. 75/79) տեխստերում: Հետաքրքիր է յատկապէս Մաշատ N 96 տեխսոք: Այդուեղ խեթական արքայի նամակի հասցեատէրը Տապիկկայում գտնուող ոմն քարարաստիճան պաշտօնեալ է, որին (կամ մէկ այլ անձի) յանձնարարում է գնալ Վերին երկիր և զօրահաւաք անել: Արդեօք այդ նախապատրաստութիւնները նախատեսուած էին դէսի Հայասա արշաւանք կազմակերպելու համար, թէ ոչ, տեխստից պարզ չէ: Այնուեղ տրուած Հայասան «կարգի բերել» արտայայտութիւնը կարելի է մեկնարանել եւ որպէս արշաւանք, եւ որպէս այդ երկրում խեթական արքային զօրք տրամադրելու ցամկութեան բացակայութիւն: Կարելի է ներադրել, որ խեթական պաշտօնեան սկզբում պիտի զօրք հաւաքէր Վերին երկրում, այնուհետեւ գնար Հայասա, յետոյ վերադառնար Տապիկկա, այնուից նոր զօրք հաւաքէր եւ սպասէր խեթական արքային:

28 Քաղաքը, հաւանարար, նոյնպէս Վերին երկրում է գտնուել (ժամ. *Maşat Höyük* (Մաշատ-Բլուր) հնավայրը (Տապիկկայի մասին տե՛ս RGTC, VI, S. 402)): Այն հեռու էր Խարքուսայից մօտ 150 կմ (տե՛ս ALP, S., *Remarques sur la géographie de la région du Haut Yeşil-Irmak d'après les tablettes Hittites de Maşat-Höyük*, Florilegium Anatolicum, Mélanges offerts à Emmanuel Laroche, Paris

թական KUB XXIII 72 տեքստում²⁹ նկարագրուող դէպքերից յետոյ ընկած ժամանակաշրջանով, այսինքն՝ դէպքերը տեղի են ունեցել Թուդիսալիյա Գ.ի օրօք (ն.թ. ԺԴ. դարի առաջին կիս): Սա այն ժամանակաշրջանն է, երբ հարեւան մի քանի երկրներ, օդտուելով Խաթթիի ժամանակաւոր թուլացումից, հաւանաբար, համաժամանակեայ յարձակումներ էին իրագործել Խեթական պետութեան վրայ: Խաթթիի մայրաքաղաքը գրաւուած էր կասկերի կողմից, իսկ Ազգին յարձակուել եւ գրաւել էր «քոլոր Վերին երկրները եւ Սամուխան սահման դարձրել»:³⁰ Պարզ չէ՝ արդեօք ազգեցիները գրաւել էին քաղաքը, թէ պարզապէս այն մօտ էր նրանց գրաւած տարածքներին: Սակայն, հաւանաբար կարճ ժամանակ անց, խէթերը կամ ետ են վերցրել Սամուխան, կամ ազգեցիները, վերցնելով իրենց աւալը, նահանջել են դէպի իրենց երկիր՝ ազատելով Վերին երկրի տարածքը: Յամենայն դէպս, Սամուխան Թուդիսալիյա Գ.ի եւ արքայազն Սուլպիլուլիումայի համար շուտով դառնում է այն յենակէտը, որտեղից նրանք սկսում են Խաթթիի հզօրութեան եւ տարածքային ամ-

1979, 29-35; KLINGER, J., *Das Corpus der Maşat-Briefe und seine Beziehungen zu den Texten aus Hattusa*, in *Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie*, 85, (1995), 74-108; ÖZGÜC, T., *Maşat Höyük kazıları ve çevresindeki Araştırmaları*, Ankara, Türk Tarih Kurumu, 1978; Նոյն, *Excavations at the Hittite Site, Maşat Höyük: Palace, Archives, Mycenaean Pottery*, American Journal of Archaeology, 84, (1980), 305-309; MIELKE, D.P., *The Border City: Maşat Höyük-Tapikka. Key sites of the Hittite empire*. Ch. 48. *The Oxford Handbook of Ancient Anatolia: 10.000-323 B.C.E.*, 2011, 1045-1054 եւ այլն): Այն հանդիսացել է նաև խեթական սահմանային ուժերի հրամանատարի (*BƏL MADGALTI*) նստավայրը: Տափիկվան յայտնի է եղել նաև Տապագգաս անուամբ (տե՛ս BARJAMOVIC, G., *A Historical Geography of Anatolia in the Old Assyrian Colony Period*, 258, 273):

- 29 Տեխսոր իրենից երկայացնում է խեթական արքայ Առնուվանդա Աի եւ Վերին Եփրատի աւազանի երկրների (Խորվա, Պախիսովա, Ծուխմա, Մալդիյա եւ այլն) միջև. կնքուած պայմանագիր: Այդտեղ Երկայացուած են պայմանագրի կմէման նախօրէին վերինեփրատեան մի շարք երկրների հակախեթական ապստամբութեան իրադարձութիւնները (GURNEY, O.R., *Mita of Pahhuwa*, Annals of Archaeology and Anthropology, 28, (1948), 32-48. Տեխսոր մասին տե՛ս նաև ՀԼՏ, 114-116):
- 30 Խեթական արքաների ժամանակագրութիւնը տրուած է՝ ըստ BRYCE, T., *The Kingdom of Hittites*, Oxford 2005, XV.
- 31 KBo VI 28 6-15 (CTH 88).

բողջականութեան վերականգնման գործընթացը³²: Փաստօրէն, Սամուխան ժամանակաւորապէս հանդիսանում էր մայրաքաղաքը Խեթական պետութեան, որ պարփակուած էր վերին երկրի տարածքում: Խեթական արքան Սամուխան քաղաքից արշաւում է նաեւ դէպի Կումմախա (Կամմախ), որտեղ ճակատամարտ է տալիս Հայասայի արքայ Կարաննիի դէմ³³: Կումմախա երկիրը, որ յետագյում նորից անցաւ խեթական տիրապետութեան ներքոյ, գտնուում էր մի կողմից իսուվայի (Կարաւից), միւս կողմից՝ Հայասայի հարեւանութեամբ³⁴: Արքայազն Սուպպիլիուլիումային յաջողուում է նաեւ կատարել վերաբնակեցումներ կասկերից ետ գրաւած տարածքներում: Հաւանական է կարծել, որ խօսքը վերաբերում էր նախ եւ առաջ վերին երկրի տարածքին³⁵:

Այնուհետեւ Վերին երկիրը յիշատակուել է Սուպպիլուլիումա Ա.ի օրօք (ն.թ. 1350-1322): Խաթթիի արքան պայմանագիր էր կնքել Հայասայի տէր Խուկկանայի հետ³⁶: Պայմանագրում Սուպպիլուլիուման չի ըլջանցում այն փաստը, որ Հայասան դեռ պահում է Խաթթիից գրաւած հողերը (Վերին երկրի - Ռ.Ղ.), եւ որ Խուկկանայի երկրում կային նաեւ գերուած խեթակատակներ, ուստի դաշնագրի մի կէտը Խուկկանային պարտաւորեցնում էր վերադարձնել նրանց եւ դուրս գալ գրաւուած խեթական տարածքներից: Այդ մասին է նշուած նաեւ Սուպպիլուլիումայի տարեգրութեան մի հատուածում, որտեղ Հայասայի կողքին տրուած է նաեւ Վերին երկրի անունը: Նշուած է, որ Հայասան թշնամական գործողութիւններ էր ձեռնարկել Խաթթիի դէմ: Սա, հաւանաբար, այն ժամանակաշրջանն է, երբ Խաթթիի արքան զբաղուած էր Միտտանիի դէմ պատերազմով³⁷:

32 GÜTERBOCK, H., *The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II*, in *Journal of Cuneiform Studies*, 2, (1956), 63-67; BRYCE, T., *The Kingdom of Hittites*, Oxford 2005, pp. 147-148.

33 GÜTERBOCK, H., *The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II*, 2, p. 66.

34 ՔՊՍԵՍ.Ն, Ա., Ամի-Կամմախը խեթակամ դարաշրջամում, Պատմա-բանափրական հանդէս, 3, (2002), 237:

35 GÜTERBOCK, H., ամդ., 3, 91:

36 FRIEDRICH, J., *Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache*, 2 T., 124-129; CARRUBA, O., *Die Hajasa-Vertäge Hattis*, Documentum Asiae Minoris, Wiesbaden 1988, 59-75 (CTH 42).

37 GÜTERBOCK, H., ամդ., 4, 114:

Վերին երկրի մասին տեղեկութիւններ կան նաև Սուպպի-լուիումայի որդի Մուրսիլի Բ.ի տարեգրութիւններում³⁸: Վերին երկրի անվտանգութեան ապահովումը մնում էր Մուրսիլի Բ.ի գործունէութեան հիմնական ուղղութիւններից մէկը: Իր «Տաս-նամեայ» տարեգրութեան երկրորդ տարում արքան նորից ստի-պուած է լինում կարգուկանոն հաստատել Վերին երկրում: Նոյ-նը նա ստիպուած է լինում իրագործել նաև եօթերորդ տա-րում, երբ Տիբիյա երկրի³⁹, ինչպէս նաև Հայասայի⁴⁰ զօրքերը Վերին երկրի վրայ էին յարձակուել եւ աւարի մատնել այն: Մուրսիլի Բ.ը յիշատակում է, որ Տիբիյա երկրի կառավարիչ Պիխուսունիյեան դեռեւ իր հօր՝ Սուպպիլուվիումա Ա.ի օրօք, երբ վերջինս Միտտանի երկրում էր, յարձակուել էր Վերին երկ-րի վրայ, առաջացել մինչեւ Զագիսա քաղաք եւ գրաւել իստի-տինա քաղաքը: Մուրսիլի Բ.ը, պատճառաբանելով Պիխուսունիյա-յի հրաժարուելը՝ վերադարձնել խեթահպատակ գերիներին, պա-տերազմ է սկսում Տիբիյա երկրի դէմ: Պատերազմի ընթացքում խեթական զօրքերին յաջողուում է ոչ միայն գրաւել ամբողջ Տի-բիյա երկիրը, այլ նաև գերել Պիխուսունիյային: Հստ Մուրսիլի տարեգրութեան ուժերորդ տարուայ իրադարձութիւնների՝ հա-յասացիները, լսելով Մուրսիլիի կողմից նախապատրաստուող արշաւանքի մասին, նրա մօտ դեսպան են ուղարկում՝ համաձայ-նելով կատարել Խաթթիի արքայի պահանջները⁴¹: Մուրսիլի Բ.ն առժամանակ յետաձգում է իր նախատեսած արշաւանքը, սակայն յաջորդ տարի նա հայասացիներից կրկին պահանջում է վերա-դարձնել ռազմաւարը, բայց մերժում է ստանում Հայասայի ար-քայ Աննիյայից⁴²: Վերջինս ցանկանում էր գերիների փոխանա-

38 CTH 61; GÖTZE, A., *Die Annalen des Muršiliš*, MVAG, 1933, 38 (այսուհետ՝ AM); GRÉLOIS, J.-P., *Les Annales Decennales de Mursili II (CTH 61.I)*, Hethitica, 1988, IX, 17-145; ՂԱԶԱՐԵԱՆ, Ռ., Մուրսիլի Բ.ի «Տասնամեայ» տարե-գրութիւնը, Երեւան 2013:

39 Գտնուել է Արեւելապնտական լեռների շրջանում եւ սահմանակից է եղել Վերին երկրին:Տե՛ս RGTC, VI, 425-426.

40 Հայասայի զօրքերը յարձակուել էին Խստիտինա եւ Դամկուվա երկրների վրայ (տե՛ս AM, 94-98):

41 AM, 102-103.

42 Մուրսիլի Բ.ը նամակներ է ուղարկում Հայաս-Ազգի՝ Աննիյայից պահանջն-լով վերադարձնել դեռեւ Սուպպիլուիումա Ա.ի օրօք Հայասայում պաս-տան գտած խեթահպատակներին եւ Խստիտինա ու Դամկուվա խեթական եր-

կում կատարել. Հրաժարւում էր վերադարձնել խեթական գերիներին, քանի դեռ չէր ստացել իր նախկին հպատակներին⁴³: Դեռ աւելին, օգտուելով յարմար առիթից, որ Մուրսիլիս Բ.ը գըտնըլում էր Խաթթիի հարաւում, հայսացիները յարձակում են Վերին երկրի ուղղութեամբ, գրաւում իստիտինա երկիրը եւ պաշարում կաննուվարա խեթական քաղաքը: Խեթական մի բանակ մեծ մատուուկապետ նուվանցայի գլխաւորութեամբ շտապ կարգով օգնութեան է հասնում կանուվարա քաղաքին: Հայսացիները կաննուվար քաղաքի տակ տեղի ունեցած ճակատամարտում պարտութիւն են կրում: Մուրսիլիի կառավարման վերջին տարիներին Վերին երկրն ամբողջովին գտնւում էր խեթերի վերահսկողութեան ներքոյ:

Մուրսիլի Բ.ին յաջորդած Մուվաթալի Բ.ը (ն.թ. 1295-1272) Եգիպտոսի դէմ պատերազմի նախօրէին Խաթթիի մայրաքաղաքը տեղափոխեց հարաւային Փոքր Ասիայում գտնուող Թարխունտասսա: Այս ձեռնարկման պատճառները հիմնականում երկուսն էին: Արքան նպատակ ունէր նստավայր դարձնել Սիրիային շատ աւելի մօտ գտնուող Թարխունտասսան, որտեղից հեշտ էր ղեկավարել Եգիպտոսի դէմ սպասուող պատերազմը: Սակայն այս քայլին դիմելու առաւել հիմնաւոր պատճառ էր հաւանաբար մայրաքաղաք Խաթթուսային մշտապէս սպառնացող կասկական վտանգը: Երբ Մուվաթալին հեռանում է Խաթթուսայից, կասկական ցեղերը գրոհում են Խաթթիի հիւսիսային շրջանները: Աւերտում են Պիսխուրու, Դախտիպասսա, Խսխուպիտա, Մարիստա երկրները: Այնուհետեւ կասկերին յաջողում է անցնել Մարասսանտիյա գետը եւ հասնել Քանէսի մօտ: Կասկերը մէկ ուրիշ անդամ յարձակում եւ իրենց նուաճումների սահման են դարձնում նաեւ կարախնա⁴⁴ եւ Մարիստա բնակավայրե-

կըրմերից վերցրած գերիմերին: Անհիյայից մերժում սուանալով՝ Մուրսիլի Բ.ը Հայսա-Ազգի սահմանային Ռւրա քաղաքի վրայ յարձակում է կատարում, որի ելքի մասին մեզ տեղեկութիւններ չեն հասել, սակայն յետագայում խեթական արքան ստիպուած էր կրկին արշաւել դէպի Հայսա-Ազգի (Keilschriftenkunden aus Boğhazköi (այսուհետ՝ KUB) XIV 17 III 1-24):

43 AM, 102-107.

44 Կարախնա քաղաքը նոյնպէս Վերին երկրում էր: Այն յիշատակուել է դեռեւս «կապպաղովկեան» առևտրական տեխստերում: Քաղաքը հանդիսացել է նաեւ կարեւոր խեթական հոգեւոր կենտրոններից մէկը (այս մասին առաւել

ըս: Փաստօրէն այս յարձակումների կիզակէտում էր յայտնուել Վերին երկրի տարածքը: Սակայն արքայի եղբօրը՝ Խաթթուսիթին յաջողուում է ետ շպրտել կասկերին եւ նորից վերականգնել խեթական գերիշխանութիւնը Խաթթիի հիւսիսում: Կասկերի վտանգաւոր աւարառուական արշաւանքները չէզոքացնելու համար Մուվաթալլին նրանց տարածքներին յարող ողջ սահմանամերձ գոտին, այդ թւում՝ Վերին երկիրը, յանձնում է Խաթթուսիլիին: Նրան յանձնուած տարածքներում կազմակերպւում է իւրայստուկ ռազմականացուած գոտի: Այն արեւմուտքից արեւելք ձգւում էր մօտաւորապէս ժամանակակից Մերզիֆոնից մինչեւ կամախ՝ ընդգրկելով կասկական ցեղերին յարող մի շարք առանցքային շրջաններ (Իսխուպլիտա, Մարիստա, Խիսսաշապա, Կատապա, Խանխանա, Դարախնա, Խաթթենա, Դուրմիտա, Պալա, Տումաննա, Գասայա, Սապա, Խուլանա գետի երկիր): Մուվաթալլին Խաթթուսիլիին նշանակել էր նաեւ Վերին երկրի կառավարիչ՝ արքայատոհմի ներկայացուցիչ Յիդայի որդի Արմաթարիսունտայի փոխարէն, եւ Խակմ(պ)իսայի⁴⁵ արքայ⁴⁶: Սա կարող էր նշանակել, որ բոլոր այս երկրամասերը եւ քաղաքները, որոնք ներառուած էին այս փոխարքայութեան մէջ, կոչւում էին Վերին երկրներ, քանի որ մի քանիսը մինչ այդ յայտնի չէին որպէս այդպիսին: Կարելի է ասել, որ վարչական առումով Վերին երկիրը ընդլայնել էր իր տարածքները եւ այժմ աւելի մեծ տարածք էր ընդգրկում: Արքայատոհմի անդամների նշանակումը Վերին երկրի կառավարիչներ ընդգծում էր այդ երկրամասի կարեւորութիւնը Խաթթիի համար եւ այդ պաշտօնի հեղինակաւոր լինելու փաստը: Փաստօրէն, խեթական արքան կասկական խնդրի լուծումը փորձեց գտնել սահմանամերձ թագաւորութեան ստեղծումով: Այժմ տէրութեան կենտրոնական նահանգներին վտանգ չէր սպառնում, եւ Մուվաթալլին սկսեց ազատ գործել հարա-

մանրամասն տե՛ս HAAS, V., *Geschichte der Hethitischen Religion*, 423, 434, 450: Կարախնայի տեղադրութեան վերաբերեալ տե՛ս RGTC VI, 177-180; RGTC, VI/2, 66; ALP, S., *Die Lage der hethitischen Kultstadt Karahna im Licht der Masat-Texte*: in BOEHMER, R.M. – HAUPTMANN, H., (eds.), *Beiträge zur Altertumskunde Kleinasiens*, Festschrift für Kurt Bittel (Mainz am Rhein), 1983, 43-46):

45 Տե՛ս RGTC, VI, 65-67.

46 OTTEN, H., *Die Apologie Hattusilis III*, Studien zu den Boğazköy-Texten (այսուհետ՝ StBoT), 24, 6-15.

ւում⁴⁷: Խաթթուսիլին Վերին երկրում շարունակեց իր նախորդ-ների՝ Սուպպիլուլիումայի, Մուրսիլիի քաղաքականութիւնը՝ Վերին երկրներում կատարելով վերաբնակեցումներ, վերականգնելով աւերուած կամ լքուած բնակավայրերը⁴⁸:

Մուլվաթալիին յաջորդեց նրա որդին՝ Մուրսիլի Գ.Ը (Ուրխի-Թեշուրը) (Ա.Ք. 1272-1267), որի կառավարման տարիներն անցան հօրեղբօր՝ Խաթթուսիլիի հետ հակամարտութեան պայմաններում: Խաթթուսիլիի եւ Ուրխի-Թեշուրի յարաբերութիւնները նկարագրող տեքստերում⁴⁹ նոյնական տեղեկութիւններ կան Վերին երկրի մասին: Մուրսիլի Գ.Ն Արմա-Թարխունտայի որդուն՝ Սիպպացիտիին, որին նա ետ էր կանչել աքսորից, ուղարկեց Վերին երկրի՝ հաւանաբար, խոստանալով նրան նշանակել տեղի կառավարիչ: Այս ամէնն, անշուշտ, ուղղուած էր Խաթթուսիլիի դէմ: Սկսում է պատերազմ Խաթթուսիլիի եւ Ուրխի-Թեշուրի միջեւ, որ հիմնականում ընթանում էր Վերին երկրի տարածքում: Պատերազմի ընթացքում Ուրխի-Թեշուրը Մարասսանտիյա քաղաքից հեռանում եւ ապաստանում է Սամուխայում, որ մէկ անդամ եւս դառնում է Խաթթիի արքաների նստավայրը: Խաթթուսիլիին պաշարման մէջ է վերցնում Սամուխան եւ ստիպում Ուրխի-Թեշուրին յանձնուել, որից յետոյ յաղթանակած Խաթթուսիլիին հռչակում է Խաթթիի մեծ արքայ (Ա.Ք. 1267-1237): Այս առճակատման ընթացքում մի շարք կասկական ցեղեր նոյնական օժանդակել են Խաթթուսիլիին՝ խեթական տարածքներում բնակուելու իրաւունք ստանալու դիմաց⁵⁰: Կան Փաստօրէն, Վերին երկրը հիմք հանդիսացաւ Խաթթուսիլիի կողմից իշխանութիւնը զալթելու համար: Խեթական տեքստերից մէկում նկարագրում է նաև Խաթթիի լքուած բնակավայրերի

47 Յամենայն դէպս, 1274ին տեղի ունեցած Քաղեջի նակատամարտում, ի թիւս այլ երկրների, որոնք նակատամարտին մասնակից են եղել խեթական կողմից, թշուել է նաեւ կասկա երկիրը: Սա կարող է փաստել միայն այն մասին, որ այդ ժամանակ կասկական որոշ ցեղեր ենթարկում էին Խաթթիին, կամ նակատամարտին մասնակցել են վարձկան կասկ զինուորներ, ինչն աւելի հաւանական է:

48 OTTEN H., անդ, 16-21:

49 CTH 81; 85.

50 OTTEN, H., անդ, 22-27: BRYCE, T., *The Kingdom of the Hittites*, Oxford 2005,

(Հաւանաբար, Վերին Երկրի) վերաբնակեցումը: Յիշատակւում են որոշ քանակութեամբ վերաբնակիչներ նաեւ Ազգիից⁵¹:

Գոյութիւն ունի Խաթթուսիլի Գ.ի որդի արքայազն Թուղ-խալիյայից (ապագայ արքայ Թուղխալիյա Դ. (ն.թ. 1237-1209) ստացուած մի նամակ⁵², որտեղ շարադրում են ռազմական գոր-ծողութիւնները Վերին Երկրում, որի վրայ յարձակուել էին թշնամինները (Հակառակորդի անուանումը պարունակող հա-տուածը վնասուած է): Այնուհետեւ ասուում է, որ «Յա (Հաւանա-բար, թշնամին - Ռ.Դ.) մօտեցել է Սամուխա Քաղաքին»: Հաւանա-կան է կարծել, որ թշնամիններ են հանդիսացել կա'մ կասկերը, կա'մ հայասացինները: Դէպեհը տեղի են ունեցել Խաթթուսիլի Գ.ի օրօք, սակայն պարզ չէ, թէ նրա կառավարման ո'ր ժամանա-կաշը շանուած:

Խաթթուսիլիին յաջորդած Թուղխալիյա Դ.ի օրօք յիշա-տակուել են Վերին Երկրի լեռները, որտեղ արքան որս է արել,⁵³ այսինքն՝ Վերին Երկրի հանդիսանում էր Խաթթիի արքաների որսատեղիններից մէկը: Թուղխալիյա Դ.ի օրօք է թուագրուում նաեւ այն տեքստը⁵⁴, որտեղ Խաթթիի արքան սահմանային նա-հանգների կառավարիչներին հրահանգում է նախազգուշական միջոցներ ձեռք առնել ընդդէմ Ազգի, կասկա եւ Լուկիա Երկրո-ների: Փաստորէն, այդ ժամանակաշրջանում Վերին Երկրին ան-միջականօրէն յարող Երկու Երկրները դեռեւս վտանգաւոր էին համարում Խաթթիի համար: Հաւանականութիւնը մեծ է, որ տեղի են ունեցել նաեւ ներխուժումներ Վերին Երկրի տարածք:

Խաթթիի արքաներից Թուղխալիյա Դ.ը վերջին արքան է, որի ժամանակաշրջանից մեզ են հասել թուագրուող տեղեկու-թիւններ Վերին Երկրի մասին: Խաթթիի յաջորդ տիրակալների՝ Առնուվանդա Գ.ի, Սուպալիլուլիումա Բ.ի ժամանակաշրջանից Վերին Երկրի վերաբերեալ մեզ տեղեկութիւններ չեն հասել:

51 KBo XII 53+KUB XLVIII 105 ՀԿ 21 (ARCHI, A. - KLENGEL, H., *Ein hethitischer Text über die Reorganisation des Kultes*, Altorientalische Forschungen, 7, (1980), 143-157).

52 KUB XIX 23 (CTH 192). Տե՛ս նաեւ ՀԼՏ, 137:

53 KBo XI 40 (CTH 682.2.B). Տե՛ս նաեւ HAWKINS, J.D., *Tudhaliya the Hunter, The Life and Times of Hattushili III and Tuthaliya IV. Proceedings of a Symposium held in Honour of J.De Roos, 12-13 December 2003, Leiden 2006*, 53.

54 KUB XXVI 12 II 12-15.

Գոյութիւն ունեն եւս խեթական մի քանի տեքստեր, որտեղ յիշատակուել է Վերին երկիրը, սակայն այլ տուեալների բացակայութեան պատճառով դժուար է այդ տեքստերը թուագրել որեւէ արքայի ժամանակաշրջանով: Օրինակ՝ պահպանուել է իշտար աստուածուհուն նուրիաբերուող իրերի հաշուարկման տեքստ⁵⁵, որտեղ յիշատակւում են Վերին երկրի ազնուականները (LÜMEŠ GAL): Գուշակային տեքստերից մէկում⁵⁶ յիշատակւում են նաեւ «ազգեցին (= արքան)» եւ Վերին երկիրը (ն.թ. ԺԳ.): Խեթական օրէնքները նկարագրող տեքստերից մէկում նշում է, որ նախկինում խեթական մի շարք քաղաքների (Տամալվիյայի, Ցալպայի, Տասխինիյայի, Խատրայի, Մանդայի, Սալայի եւ Խիմմուվայի) զինուորներն ազատուած էին Տահհան եւ լուզի կոչուող պարհակներից: Ցիշատակւում է տեքստն արձանագրող գրչի (Hanikuili) նախնիներից մէկը (Karunuwa), որ ծագումով Վերին երկրից է եղել⁵⁷: Պայմանականօրէն «Գետային Յաւարկութիւն» կոչուող տեքստն իրենից ներկայացնում է մի նամակ՝ առաքուած խեթական արքային ինչ-որ պաշտօնեայից: Տեքստում նկարագրում է Պիտտիյարիգայից նաւակներով մինչեւ Սամուխա հացի առաքումը: Այստեղ նկարագրում է Վերին երկրի տարածքը, սակայն այն չի յիշատակւում: Տեքստը, հաւանաբար, նոր թագաւորութեան ժամանակաշրջանին է վերաբերում:

Խեթական տէրութեան անկումից (ն.թ. մօտ 1180) յետոյ խեթական Վերին երկիրն այլեւս չի յիշատակուել աղբիւրներում: Զ. Ցաքարը կարծում է, որ խէթերը մինչեւ Խաթթուսան լքելն արդէն կորցրել էին իրենց վերահսկողութիւնը ոչ միայն պետութեան արեւմտեան եւ հիւսիսային շատ շրջանների, այլ նաեւ՝ Սարիսսայի⁵⁸, Տապիկկայի եւ այլ կարեւոր քաղաքների վրայ⁶⁰:

55 KBo XVI 83 (CTH 242).

56 CTH 582; ՀԼՏ, 149:

57 CTH 291; HOFFNER, H.A., *The Laws of the Hittites*, Leiden-New-York-Köln 1997, 98; ՀԼՏ, 125:

58 KUB XXXI 79 (CTH 214.17). Տե՛ս Յան ԿՈՆԵԼԻԱՆ, F., *Geographie des Hethiterreiches*, Orientalia, 27, (1958), 373-374; ՀԼՏ, 118-119:

59 Վերին երկրի կարեւոր բնակավայրերից էր Յան Սարիսսան (Սարիսսայի վերաբերեալ տե՛ս RGTC VI, 351-352): Այն գտնուել է Կոչակի հմավայրի տեղում՝ Սերաստիայից մօտ 50 կմ հարավ (հմավայրի պեղումների եւ Սարիսսա բաղաքի վերաբերեալ առաւել մանրամասն տե՛ս WILHELM, G., *Die Tontafelfunde der 2. Ausgrabungskampagne 1994 in Kuşaklı*, MDOG, 127, (1995),

Հաւանաբար, Խեթական տէրութեան անկումից յետոյ Վերին երկրի տարածքը նուաճել են ռազմատենչ կասկական ցեղերը։ Հնարաւոր էր նաեւ այդ ուղղութեամբ ներխուժումներ Հայասայի կողմից։ Յամենայն դէպս, յետագայում ասորեստանեան աղբիւրները յիշատակել են Վերին երկրից հարաւ գտնուող կասկու երկրի մասին⁶⁷։ Այսինքն՝ Վերին երկրի տարածքն Ը.Ք. ԺԲ.-Ը.

- 37-42; Նոյն, *Die Keilschriftfunde der Kampagne 2001 in Kuşaklı*, in *Andreas Müller-Karpe, Untersuchungen in Kuşaklı 2001*, MDOG, 134, (2002), 342-351; MÜLLER-KARPE, A., *Untersuchungen in Kuşaklı 1992-94*, MDOG, 127, (1995), 5-36; Նոյն, *Kleinkönige und Großkönige. Sarissa – eine hethitische Stadt im östlichen Zentralanatolien*, in *Blick in die Wissenschaft*, 8, (1996), 58-67; Նոյն, *Untersuchungen in Kuşaklı 1999*, MDOG, 132, (2000), 311-353; Նոյն, *Untersuchungen in Kuşaklı 2000*, MDOG, 133, (2001), 225-250; Նոյն, *Untersuchungen in Kuşaklı 2001*, MDOG, 134, (2002), 331-351; Նոյն, *Untersuchungen in Kuşaklı 2002*, MDOG, 136, (2004), 103-135; Նոյն, *Untersuchungen in Kuşaklı 2003*, MDOG, 136, (2004), 137-172; Նոյն, *Untersuchungen in Kuşaklı 2004 und 2005*, MDOG, 138, (2006), 15-42; MIELKE, D.P., *Die Akropolis der hethitischen Stadt Kuşaklı-Sarissa*, in *Nürnberger Blätter zur Archäologie*, 16, (1999/2000), 91-110; Նոյն, *Kuşaklı-Sarissa. Kultort im Oberen Land*, in *Die Hethiter und ihr Reich. Das Volk der 1000 Götter*, Bonn 2002, 176-189; Նոյն, *Kuşaklı-Sarissa: A Hittite Town in the “Upper Land”*, in *Recent Developments in Hittite Archaeology and History. Papers in Memory of Hans G. Güterbock*, 2002, 145-155; Նոյն, *The province center: Kuşaklı-Şarişşa*, in *Key sites of the Hittite empire. The Oxford Handbook of Ancient Anatolia*, 2011, 1042-1045 եւ այլն):
- 60 YAKAR, J., *Dating the Sequence of the Final Destruction/Abandonment of LBA Settlements: Towards a better Understanding of Events that led to the Collapse of the Hittite Kingdom*, BYZAS, 4, (2006), 33-51.
- 61 Կասկերի առաջխաղցումը Ա.Ք. ԺԲ. հաւանաբար, աշխարհագրական աւելի լայն բնոյք է կրել եւ տարածուել Սեւ ծովի հարաւային ափերից մինչեւ Հիւսիսային Միջազգեստ։ Այդ արշաւանքներն, ինչպէս եւ նախկինում, կրել են աւելի շատ աւարառուական բնոյք։ Ասորեստամի արքայ Թիգլարպալասար Գ.Ը (Ա.Ք. 744-727) տեխտերից նելուամբ արքայ Թիգլարպալասար Գ.Ը (Ա.Ք. 744-727) տեխտերից նուէրներ էին բերել իրեն։ Դրանց մեջ բազմաթիւ երկրների շարքում նշում է նաև Կասկայից Դադիլու։ Կասկա երկիրը նշուել է Մելիդ (յետագայի Մալարիայի շրջան) եւ Թարալ (յետագայի Կապադովկիայի տարածքը) երկրների մօս։ Այսինքն՝ այդ ժամանակաշրջանում կասկերը ստեղծել էին մի քաղաքական միավոր Հալիսի մեծ ոլորանից հարաւառելիք, որի մասին, սակայն, կցկուուր տեղեկութիւնները հնարաւութիւն չեն տալիս՝ կարծիք կազմելու նրա պետական կառուցուածքի եւ հարեւանների հետ քաղաքական-տնտեսական յարաբերութիւնների վերաբ-

դարեր), ամենայն հաւանականութեամբ, յայտնուել էր կասկերի վերահսկողութեան տակ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Վերին երկրի պատմութիւնը մաս է կազմել Խաթթիի պատմութեան: Այն գտնուել է Խեթական պետութեան հիւսիսարեւելեան հատուածում եւ հանդիսացել է Խաթթիի կարեւորագոյն քաղաքական, հոգեւոր եւ տնտեսական երկրամասերից մէկը, իւրայատուկ մի «քաջութիւն», որ ռազմավարական դիրք էր գրաւում Հայկական լեռնաշխարհի եւ Փոքր Ասիայի շփման գօտում: Այն առաջնակարգ նշանակութիւն է ունեցել նաեւ Խեթական տէրութեան համար՝ Հայասա կամ կասկա երկրներից պաշտպանուելու կամ նրանց դէմ ռազմական գործողութիւններ սկսելու առումով:

Վերին կամ Բարձր երկիրը հիմնականում ընդգրկել է այն տարածքը, որ յետագայում յայտնի է դարձել որպէս Փոքր Հայք: Այսինքն, աշխարհագրական առումով նրա տարածքի զգալի հատուածը մաս է կազմել Հայկական լեռնաշխարհի եւ այդ տեսանկիւնից նրա պատմութիւնը մասն է նաեւ Հայաստանի հին շրջանի պատմութեան:

Հաւանական է կարծել, որ խէթերը Վերին երկիր տեղանունը վերցրել են խաթերից: Յամենայն դէպս, արդէն Հին թագաւորութեան ժամանակ (ն.թ. ԺԷ.-ԺԶ.) Վերին երկրի տարածքը գտնում էր Խեթական պետութեան կազմի մէջ:

Խեթական Վերին երկիրը կարելի է դիտարկել որպէս վայր, որտեղից սկիզբ է առնում եւ հոսում Խաթթիի գլխաւոր Մարասանտիյա (Հալիս) գետը, եւ երկրամասի անուանումը պայմանաւորուած է այդ գետով դէպի վեր բարձրանալու, դէպի նրա ակունքների շրջանը հասնելու հանգամանքի հետ:

Խեթական աղբիւրները հնարաւորութիւն չեն ընձեռում յստակ տալ Վերին երկրի սահմանները (յատկապէս այն պատճառով, որ խէթակասկական հիւսիսարեւելեան սահմանագիծն անընդհատ փոփոխուել է), սակայն միանշանակ է, որ այն հիմնա-

կանում գտնուել է Հալիս գետի վերին աւազանում եւ ընդգրկել է հիմնականում Զիլիշ (Չելա) մինչեւ Կամախ ընկած տարածքը, հիւսիսում հասել մինչեւ Գայլ գետի հովիտ եւ Արեւելապոնտական լեռների հատուած (որտեղ սահմանակցել է կասկերի հողերին), իսկ հարաւում՝ Թեղարամա:

Վերին (Բարձր) երկրի անունը սերտօրէն առնչւում է նաեւ Հայոց աղբիւրներում յիշատակուած Բարձր Հայք անուան հետ: Բարձր Հայք աշխարհի տարածքը աշխարհագրական առումով մօտ է եղել Վերին երկրի տարածքին կամ, հաւանական է, նաեւ նրա մի մասն է կազմել: Ամենայն հաւանականութեամբ, խեթական Վերին կամ Բարձր երկրի անուանումը տեղաշարժ է կատարել եւ յետագայում պահպանուել հարեւան տարածքի վրայ:

Խեթական տէրութեան անկումից (ն.թ. մօտ 1180) յետոյ խեթական Վերին երկիրն այլեւս չի յիշատակուել աղբիւրներում: Ամենայն հաւանականութեամբ Վերին երկրի տարածքը նուաճել են ռազմատենչ կասկական ցեղերը:

Summary

THE HITTITE UPPER LAND

ROBERT GHAZARYAN

This article is devoted to the history of the Hittite Upper Land and the question of its location. The Upper Land was one of the most important regions of Hatti and mainly embraced those lands that were later known as Armenia Minor (Lesser Armenia).

It was situated in the north-eastern part of the Hittite state and was one of the most important political, spiritual, and economic regions of Hatti that occupied a strategic position in the contact zone between the Armenian Highland and Asia Minor.

The Hittite Upper Land can be regarded as a place from where the main river of Hatti, Marassantiya (Halys) originated and flowed. The name of the region is based on the fact that one had to climb up the course of that river to get to its source.

Hittite sources do not make it possible to precisely determine the boundaries of the Upper Land, but it is of no doubt that it was mainly situated in the upper basin of the river Halys and included mainly the territory that lay from Zile (Zela) to Kamakh, reaching the valley of the river Gayl and the eastern Pontic Mountains in the north and Tegarama in the south.

The name of the Upper Land is closely connected with the name Upper Armenia mentioned in Armenian sources. The territory of Upper Armenia was geographically close to the territory of the Upper Land or was probably also part of it. It is likely that the name of the Hittite Upper or High Land shifted and was later preserved in the neighbouring territory.